Արձանագրություն 5

Վանաձոր համայնքի ծանրամարտի մասնագիտացված մարզադպրոցի կառուցման աշխատանքների ձեռքբերման «ՀՀ ԼՄՎՔ ՀՄԱ ԱՇՁԲ-19/103» ծածկագրով հրատապությամբ մեկ անձից գնումներ կատարելու գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ «07» նոյեմբերի 2019թ. ժամը 10:00-ին

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ

Ա. Եսայան

Անդամներ

Ա.Սաղաթելյան

Լ. Հախինյան

Ա. Գրիգորյան

Վ.Մխիթարյան

Գնումները համակարգող

Լուսինե Բաղրամյան

Օրակարգ

1. **Ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացրած որակավորման չափանիշների մասին**

1.1 «ՀՀ ԼՄՎՔ ՀՄԱ ԱՇՁԲ-19/103» ծածկագրով ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցին՝«Դ.Ա.Ն. ՇԻՆ» ՍՊԸ-ին, ՊԵԿ-ի կողմից տրվել է դրական եզրակացություն, իսկ «ՀՀ ԼՄՎՔ ՀՄԱ ԱՇՁԲ-19/103» ծածկագրով հրատապությամբ մեկ անձից գնման ընթացակարգի որակավորման չափանիշների պահանջների մասով հանձնաժողովը արձանագրել էր անհամապատասխանություններ, որոնք ՀՀ կառավարության 04 մայիսի 2017թ. Թիվ 526-Ն որոշման VII մասի 47-րդ կետի համաձայն «Դ.Ա.Ն. ՇԻՆ» ՍՊԸ-ին, առաջարկվել է երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել հրավերի պահանջների նկատմաբ բոլոր անհամապատասխանությունները և թերությունները:

«Դ.Ա.Ն. ՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից անհամապատասխանությունների և թերությունների շտկման համար ուղարկված փաստաթղթերում - հրավերի 2.5 կետի 4-րդ ենթակետի «գ» պարբերությամբ պահանջվող փաստաթղթերը ամբողջական չեն՝ համաձայնագրերի հետ ներկայացված չեն անձը հաստատող փաստաթղթերն, վարորդական իրավունքներն, ներկայացված է միայն մեկ մասնագետի դիպլոմի պատճեն և անձը հաստատող փաստաթուղթը:Տեխնիկական միջոցների վարձակալական պայմանագրերից մի քանիսում նշված չէ վարձակալման ժամկետ կամ ամսաթիվ: Ներկայացված նմանատիպ աշխատանքները չեն համապատասխանում հրավերի պահանջին,քանի որ հրավերում հստակ նշված է, որ սույն ընթացակարգի իմաստով նմանատիպ են համարվում բնակելի, հասարակական և արտադրական, էներգետիկ, հիդրոտեխնիկական լիցենզիաների շրջանակներում շենքերի, շինությունների կառուցման, վերակառուցման աշխատանքների կատարված լինելը :

Գնահատող հանձնաժողովը **որոշեց.**

Մերժել «Դ.Ա.Ն. ՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը և հաջորդ տեղ զբաղեցրած մասնակցին՝«ՊՐԻԶՄԱ-ՎԱՆ»ՍՊԸ-ին, ճանաչել առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

2. Տեղեկություններ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե հարցում կատարելու վերաբերյալ

Հարցում կատարել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե «ՊՐԻԶՄԱ-ՎԱՆ»ՍՊԸ -ին Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների և <Ֆինանսական միջոցներ> որակավորման չափանիշի չափանիշին վերաբերող որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

3. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը

«ՀՀ ԼՄՎՔ ՀՄԱ ԱՇՁԲ-19/103» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի նիստ հրավիրել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե կողմից եզրակացություն տալու օրը, բայց ոչ ուշ քան սույն թվականի «18» նոյեմբերի 2019թ. ժամը 10:00, հասցեն՝ ք. Վանաձոր Տիգրան Մեծի 22 հասցեում, 311 սենյակում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ _____ Ա. Եսայան

հանձնաժողովի անդամներ՝ _____ Ա. Սաղաթելյան

_____ Լ. Հախինյան

_____ Ա. Գրիգորյան

_____ Վ. Մխիթարյան

Գնումները համակարգող ՝ _____ Լ. Բաղրամյան